Հայ անվանի երաժիշտներ

Կազմեց՝
Մարինե



Կոմիտաս

Կոմիտասը՝ Սողոմոն Գևորգի Սողոմոնյանը, ծնվել է 1869 թվականի սեպտեմբերի 26-ին Անատոլիայի (Թուրքիա) Կուտինա (Քյոթահիա) քաղաքում: 1881 թվականին Կուտինայի վանահայր Գ.Դերձակյանը պետք է մեկներ Էջմիածին՝ եպիսկոպոս ձեռնադրվելու: Կաթողիկոսի խնդրանքով նա իր հետ մի ձայնեղ որբ տղա պետք է տաներ՝ Էջմիածնի հոգեւոր ճեմարանում ուսանելու: Քսան որբ երեխաներից ընտրվեց տասներկուամյա Սողոմոնը: Քանի որ այդ ժամանակ Կուտինայում հայերեն խոսելն արգելված էր, տղան խոսում էր թուրքերեն ու Գեւորգ Դ. կաթողիկոսի ողջույնին պատասխանում է. «Ես հայերեն չեմ խոսում, եթե ուզում եք՝ կերգեմ»: Եւ իր գեղեցիկ սոպրանոյով երգում է հայերեն շարական՝ առանց որևէ բառ հասկանալու: Բացառիկ ընդունակությունների շնորհիվ Սողոմոնը կարճ ժամանակում հաղթահարում է բոլոր խոչընդոտները, կատարելապես տիրապետում հայերենին:

1890 թվականին Սողոմոնը ձեռնադրվում է սարկավագ: 1893-ին նա ավարտում է ճեմարանը, ապա նրան շնորհվում է աբեղայի աստիճան և



Արամ Խաչատրյան

20-րդ դարի երաժշտական արվեստի խոշորագույն ներկայացուցիչներից է հայ նոր կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր Արամ Խաչատրյանը: Մեծատաղանդ և ոգեշունչ արվեստագետը՝ ստեղծագործողը և դիրիժորը, մանկավարժը և երաժշտական-հասարակական գործիչը, օժտված լինելով երաժշտության մեջ նոր, լայնահուն, հեռանկարային ուղիներ նշագծերս ունակությամբ, պատվավոր տեղ գրավեց համաշխարհային երաժշտության մեջ:
Արտահայտելով դարաշրջանի առաջադիմական-լավատեսական մղումները, ելնելով ազգային հարուստ ավանդույթներից, կոմպոզիտորը ստեղծեց նորարական արվեստ, որի լավագույն մասով հարստացրեց 20-րդ դարի դասական արվեստի գանձարանը: Արամ Խաչատրյանի ստեղծագործությամբ դարաշրջանի երաժշտությունը հարստացավ կենսակայուն խոհեր և հույզեր, կիրք և կամք մարմնավորող արվեստով: Կոմպոզիտորի՝ շուրջ հինգ տասնամյակ շարունակված ստեղծագործական ուղին,

Առնո Բաբաջանյան

«Ինչ էլ գրեմ՝ ստացվում է հայեցի»: Այդպիսին է մեր արվեստի մեծաշնորհ ներկայացուցիչներից մեկի՝ Առնո Բաբաջանյանի խորհրդանշական խոստովանությունը: Շուրջ կես դար շարունակվեց ստեղծագործող ու կատարող, երաժշտության մոլեռանդ սիրահար արվեստագետի գործունեությունը, որն առաջին իսկ քայլերից գրավեց երաժշտասեր հասարակայնության ուշադրությունը:

Առնո Բաբաջանյանը երևանցի էր: Նրա մանկությունն ու պատանեկությունը իր իսկ՝ երաժշտի ասելով, անբաժանելիորեն կապված էին նոր Երևանի կազմավորման, քաղաքի ինքնահաստատման հետ: Երևանում է ձևավորվել ապագա երաժշտի գեղարվեստական խառնվածքը, սկզբնավորվել և տարիների ընթացքում խորացել ազգայինի իր ըմբռնումը:

Ա. Բաբաջանյանի նախնիների մեջ, ինչպես և ընտանիքում մասնագիտությամբ երաժիշտներ չեն եղել, սակայն հայրը, ոչ միայն երաժշտության մեծ սիրահար էր, այլև քյամանչա, շվի ու ֆիսհարմոն էր նվագում: «Հատկապես հոգեպարար էր նրա շվին, իսկ «Դե լամանը» լսել էր սեյրոբ» - հուշումներում հիշել է

Ալեքսանդր Սպենդիարյան

Ալեքսանդր Սպենդիարյան, կոմպոզիտոր, դիրիժոր: Ծնվել է Ուկրաինայի Կախովկա քաղաքում: Միջնակարգ կրթությունը ստացել է Սիմֆերոպոլի գիմնազիայում: Երաժշտական պարապմունքներն սկսել է ինը տարեկանից, սովորել է ջութակ նվագել:
1895թ. ավարտել է Մոսկվայի համալսարանի իրավաբանական բաժինը: Մոսկվայում շարունակել է ջութակի դասեր վերցնել Մեծ թատրոնի նվագախմբի արտիստ Պեկարսկուց: Նրա երաժշտական զարգացման համար չափազանց մեծ նշանակություն է ունեցել մասնակցությունը ուսանողական սիմֆոնիկ նվագախմբին:
1896-1900թթ Պետերբուրգում աշակերտել է նշանավոր կոմպոզիտոր Ռիմսկի-Կորսակովին: Հետագայում ապրել է Ղրիմում, ուր ծավալել է երաժշտական-հասարակական բուռն գործունեություն: Յալթայի նրա տունը դառնում է մշակութային կենտրոն, ուր հաճախ եղել են Գորկին, Չեխովը, Գլազունովը, Արենսկին, Շալյապինը: Այստեղ կազմակերպվում էին երաժշտական երեկոներ, որոնց ժամանակ ելույթ էին ունենում թե՛ մասնագետ, թե՛ ժողովրդական կատարողներ:
1916թ. «Հայոց երաժշտական ընկերության» հրավերով հեղինակային համերգով այցելել է Թիֆլիս: Իսկ 1924թ., Հայաստանի կառավարության հրավերով, փոխադրվել է Երևան,

Արմեն Տիգրանյան

Հայ երաժշտության ականավոր ներկայացուցիչ Արմեն Տիգրանյանը պատկանում է արվեստագետների այն սերնդին, որը կամուրջի դեր խաղաց ազգային երաժշտական մշակույթի երկու տարբեր շրջանների միջև: Որպես ձևավորված և իր ուրույն ոճն ունեցող կոմպոզիտոր,հանդես գալով դեռևս խորհրդային կարգերի հաստատումից առաջ, նա ստեղծագործական և երաժշտական-հասարակական արգասավոր գործունեություն ծավալեց խորհրդային շրջանում: Կոմպոզիտորի ստեղծագործական ուղու առաջին տարիներն ընթացան հայ երաժշտության պատմության չափազանց կարևոր ժամանակաշրջանում, երբ պրոֆեսիոնալ երաժշտության մեջ սկսվել էր եվրոպական երաժշտության յուրացման ու ազգային ոճի ձևավորման բարդ, դժվարին գործնթացը: Կոմպոզիտորը դիմեց օպերային ժանրին և այդ բնագավառում մեծ արդյունքի հասավ: Նրա «Անուշը» առաջին լիարժեք ազգային, ռեալիստական օպերան դարձավ:
Ա. Տիգրանյանի երաժշտության հիմքը ժողովրդական երաժշտութունն է՝ իր տարբեր ճյուղավորումներով (գեղջկական, քաղաքային, աշուղական), ինչպես նաև հարուստ հոգևոր երաժշտությունը: Կոմպոզիտորի ինքնատիպ ոճը անհատականի և ժողովրդականի ներդաշնակ միաձուլման արգասիք է: Նա իր ստեղծագործություններում գեղարվեստական ճշմարտացիությամբ ու բանաստեղծորեն պատկերեց հայ ժողովրդի կյանքը, կենցաղը, սովորույթները,



Տիգրան Մանսուրյան

60-ական թվականների սկզբին ինքնահաստատվելով որպես հայ կոմպոզիտորների երիտասարդ սերնդի առավել վառ օժտված, ակտիվ որոնումներով ապրող երաժիշտ՝ Տիգրան Մանսուրյանն իր գործունեության ընթացքում մեծ ու նվիրական աշխատանքով բացահայտեց իր ստեղծագործական հզոր ձիրքը: Մասնագիտական ուսման տարբեր փուլերում նա յուրացրեց իր ղեկավարների (էդ.Բաղդասարյան, Ղ. Սարյան) ուսանելի խորհուրդները, որոնք նպաստեցին նրա անհատականության զարգացմանը:

Ստեղծագործական անդուլ աշխատանքը, մշտապես որոնումների մթնոլորտում գտնվելը բնութագրական են Տ.Մանսուրյան-արվեստագետին՝ առաջին ինքնուրույն քայլերից սկսած: Նրա հետաքրքրությունների շրջանակը չի սահմանափակվել լոկ երաժշտական արվեստով: Հայ և համաշխարհային հին ու նոր գրականությունը, կերպարվեստը, ազգային արվեստի մյուս բոլոր բնագավառները մշտապես գրավում են նրան, մնում նրա ուշադրության կենտրոնում:

Տիգրան Մանսուրյանը ծնվել է Բեյրութում: Հայրենադարձության ճանապարհները նրան ոտքին Հայաստան՝ Արթիկի շրջան, ուր ընդամենը մի տարի հաստատվեց: